Ճարտարապետության և դիզայնի ֆակուլտետի դիմորդները ընդունելության համար հանձնում են ներբուհական քննություններ:

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ -Գծանկար

1 .1 «Նկարչություն-**Գծանկար»** առարկայի քննությունը նպատակ ունի գնահատելու դիմորդի ծավալատարածական ընակալման և վերապատկերման ունակությունները, ստեղծագործական, կատարման տեխնիկան, նախատեսում է գծանկարի առաջադրանքների կատարման քննական պահանջները:

1-ին քննություն՝- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ **«Գծանկար»**

073101.00.6 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ դիմորդները նկարում են գիպսե գլուխ:

Վոլտեր, Գատամելատ ,Սոկրատ

Գիպսե գլուխների ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ:

Դիմորդների նստատեղերի ընտրությունը, ըստ համարակալված մոլբերտների, կատարվում է վիճակահանությամբ:

Առաջադրանքի կատարման համար տրվում է 8 ժամ, (240րոպե + 60րոպե ընդմիջում + 240րոպե):

Առաջադրանքը կատարվում է A2 չափսի գծագրական թղթի վրա (վատման), տարբեր կոշտության գրաֆիտե սև մատիտներով:

1.2 «Նկարչություն—**«Գծանկար»** առարկայի քննությունը նպատակ ունի գնահատելու դիմորդի ծավալատարածական ընակալման և վերապատկերման ունակությունները, ստեղծագործական, կատարման տեխնիկան, նախատեսում է գծանկարի առաջադրանքների կատարման քննական պահանջները:

021201.02.6 «Գրաֆիկ Դիզայն» մասնագիտությամբ դիմորդները նկարում են կենցաղային (երկրաչափական) առարկաներից կազմված նատյուրմորտ՝ (կուժ, դեկորատիվ իրեր, կտոր և խաղողի տերևներ, բուսական դեկոր և խնձորի 3 հարթաքանդակներից մեկը) համաձայն հավելված 2-ի:

Խաղողի տերևներ Բուսական դեկոր Խնձոր

նատյուրմորտների հարթաքանդակների ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ:

Դիմորդների նստատեղերի ընտրությունը, ըստ համարակալված մոլբերտների, կատարվում է վիճակահանությամբ:

Առաջադրանքի կատարման համար տրվում է 8 ժամ, (240րոպե + 60րոպե ընդմիջում + 240րոպե):

Առաջադրանքը կատարվում է A2 չափսի գծագրական թղթի վրա (վատման), տարբեր կոշտության գրաֆիտե սև մատիտներով:

Դրական են համարվում 8.0 և բարձր միավորները (համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 469-Ն որոշման). գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանումով:

2-րդ քննություն՝ **«Կոմպոզիցիա»**

Առաջադրանքը կատարվում է A3 չափսի գծագրական թղթի վրա (վատման), տարբեր կոշտության գրաֆիտե սև մատիտներով:

Կոմպոզիցիայի կատարման համար տրվում է 4 ժամ (240րոպե):

Տասնհինգ առարկաներից, որոնք ըստ հատկանիշների ընդգրկված են հետևյալ 4 խմբերում՝ երեքական առարկաներով համաձայն հավելված 1-ի.

1-ին խումբ՝

ա) խորանարդ բ) քառանիստ բուրգ գ)վեցանկյուն պրիզմա

2-րդ խումբ՝

ա) գունդ բ) կոն գ) գլան

3-րդ խումբ՝

ա) շրջանակ բ) եռանկյուն քանոն գ) չորսու

4-րդ խումբ՝

ա) սկավառակ բ) խողովակ գ) սալիկ

5-րդ խումբ՝

ա) պարան բ) ժապավեն գ) կտոր

Վիճակահանությամբ ընտրում են յուրաքանչյուր խմբից մեկական առարկա: Այդ առարկաներից ստեղծում են իրենց մտածած կոմպոզիցիայի հորինվածքը: Աշխատանքի կատարման համար թույլատրվում է օգտագործել գծագրական պիտույքներ:

Առաջադրանքում պարտադիր պետք է առնվազն մեկ անգամ օգտագործել վիճակահանությամբ հանված բոլոր առարկաները, ինչպես նաև պահպանել առարկաների ձևը, համաչափությունը և ամբողջականությունը: Առարկաները կարելի է պատկերել գծային, տոնային և թափանցիկ՝ 5 առարկաներից որևիցէ մեկի բացակայության դեպքում աշխատանքը չի քննվում:

Դրական են համարվում 40.0 և բարձր միավորները գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանումով: